

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.

202 West 23d St., New York, N. Y.

Vol. V, 1895



Յուսահատելու չենք :—ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻՆ

(Այս նշանաբան դրուած է ի ճակատու The ARMENIAN CRISISի, հայերէն լեզուաւ յորմէ կ'արտադրեմք նաեւ այս պատկերն բարեհաճութեամբ հրատարակչին :)

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգրին է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն Փրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջդիմութիւն հայոց.— Ներկայ ստի-
պողական պարտք.— Մասնոյ կոտորածին նո-
րագոյն տեղեկագիրք.— Մատենախօսական.
Հայկական ճգնաժամն ի թուրքիա.— Նամակ
Բա.րիզէմ — Եգիպտական Քրօնիկ.— Նամակ
Քալիֆորնիայէ.— Նամակ Նիու Պրիթմէ.— Շատ
ուրախալի է.— Ձօն առ Սր. Պատրիարք.—
Այլև Այլք:

ՅԱՌԱՋԻՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ա.

Սիրալի է տեսարանն զոր կը ներկա-
յացունեն Հայք վերջին տարիներս: Թուրք
բռնապետութեան ահագին ճնշման տակ
վեր են բռներ նոքա իրենց գլուխ, և նիւ-
թական աւերակաց մէջ բարոյական շինու-
թիւն մի յառաջ կը տանին: Բացառիկ չեն
այն անհատներ որք յանձն կ'առնուն վիշա-
ռւ վտանգ ի սէր ազատութեան— ծեծ
կ'ուտեն, բանտ կը նետուին, յաքսոր կ'եր-
թան կամ ի կախաղան կ'ենեն: «Սուր քո
և պարանոց մեր» առածն որ 1,000 տարիէ
ի վեր կը ծառայէր Հայոց իբրեւ բռնադիր
սկզբունք ստրկային գոյութեան. այսօր
տեղի տուած է ուրիշ սկզբան մի, այն է
արդարութեան սկզբունքն որ բուռն ոյժն
իրեն նիզակակից առած է.— «Սուր քո
և գուլ դանակ մեր» կ'ասէ այժմ հայ ժո-
ղովուրդն՝ իւր իրաւանց գիտակից:

Այս նշանակիչ այլակերպումն յառաջ
եկած է ու կ'երթայ շնորհիւ բազմադիմ
ազդեցութեանց: Հայ ժողովուրդն, որ դեռ
40—50 տարի առաջ փակուած էր թուր-
քիոյ մէջ, այժմ աշխարհի հետ թէ իմա-

ցական և թէ արտաքին հաղորդակցու-
թիւն ունի: Ինքզինքն այլ ևս միայնակ
թողուած չի զգար: Գիտէ թէ Եւրոպայի
մէջ իւր ողբ և իւր մոնչիւն կը լսուին:
Տակաւին 1877ին ռուսընդթուրք պատե-
րազմի ատեն, երբ ճիւղն ձգւալէտտին և
այլ ոչ սակաւ շէյխեր կ'աւերէին զՀա-
յաստան, Հայք ոչ մի բերան ունէին յեւ-
րոպա այդ անասելի արհաւիրք պատմե-
լու: Այսօր երկու Փռանոներէն և երկու
անգլիներէն յատուկ լրաթերթեր կան
մեզ, և անհամար գրողներ, հայ և օտար,
զՀայկական խնդրոյ:

Հայ ժողովուրդեան մէջ այս արական
ծրամադրութիւնը ծնուցանելու հզօր գոր-
ծիչ մ'եղա՞ծ է, պէտք է խոստովանիլ,
նոյն ինքն ապտ-իւլ-Համիտ, որ իւր մալե-
գին հալածանաց նորանոր հնարիւք հռչա-
կեց Հայոց թէ որոշած էր զիրենք ջնջել
սպառնալ: Հայք որքան աւելի յստակ տե-
սան վեհապետին այս թշնամական և ք-
պերախտ ընթացքն իրենց նկատմամբ,
այնքան աւելի արթնցան և ոգի ի բռն
գիմադրել որաչեցին:

Սուլթանն ապշած է: Իւր ոտից տակ
ճմլել կը կարծէր զՀայն իբրեւ զառա-
եալ կատու, և ահա կը տեսնէ զնա իբրեւ
առիւծ իւր գէմ կեցած քաջարի և ահար-
կու: Սր. Պատրիարք ԻԶՄԻՐԼԵԱՆ ճշմարիտ
մարմնացումն է նոր Հայութեան և իբրեւ
նորա հաւատարիմ ներկայացուցիչն՝ պատ-
կառելի և վեհադէմ կը ներկայանայ փա-
տիշահին: Առաջին ունկնդրութեան առ-
թիւ՝ Պատրիարքն գրեթէ կը նախատուի
պալատականներէն. հազիւ երկու ամիս
կ'անցնի, երկրորդ անգամ յարգունիս այ-
ցելելիս՝ կը հրաւիրուի Սուլթանին ներ-
կայանալ, ինչ որ չէր սպասուէր, և նորա
քովիկ բազմիւ, ինչ որ հրաշալի փոփո-
խութիւն կը նշանակէ երկու պետերու ա-
ռնչութեան մէջ: Երբեք Սուլթան մի վախ-
ցած չէր հայ Պատրիարքէ մի. ահա ԻԶ-
ՄԻՐԼԵԱՆ որ անահ էր փատիշահէն, ար-
դէն եղած է նմին ահարկու: Ապաքէն
բռնաւոր իշխան մի որ սիրել և սիրուիլ
չգիտէ, սաւալուած է կամ վախցունել
կամ վախնալ:

Հայ ժողովուրդի այս նոր ճրամադրու-
թիւն լոկ-թշնամոյն դէմ արի դիրք բռ-
նելուն մէջ չի յայտնուիր, այլ կան ու-
րիշ բազում նշաններ՝ ցուցիչ ընդհանուր
զարգացման: Օր մի Ազգային Թղթովոյ մէջ

Արիւարեան ապտակ ածեց Նուրեանի «ագնուաշուք» երեսին: Եւ ո՛րքան բարոյական ապտակներ զարկեր են քաջն ՄՇԱԿ և նորաթիւթն ՀԱՅՐԵՆԻՔ փտած ու փըքոտ մեծութեանց: Մեծութեան, բարերարութեան և դիւցազնութեան տիտղոսք այլ ևս այնքան աթանազին չեն: Գովեստըն չափ ունի և քննադատութիւնն իւր տեղն բռնած է— քննադատութիւն որ ամեն դատու և ատիժմանի կը հասնի և կը փպչի՝ առանց կատաղի և կրքոտ անձնականակութեան այլասեռելու:

Հայ ժողովրդի այս ինքնայարգ կացքըն կեանք և ոյժ տուած է իւր խնդրոյ յեւրոպայ: Մանաւանդ Սասնոյ ջարդէն հետէ՝ Հայկական Խնդիրն մերթ ընդ մերթ հրաբորբոք ուժգնութեամբ ի բաց մղելով ուրիշ միջազգային խնդիրներ՝ կը հասնի Նորին Վեհափառութեան կարծիքի առջեւ և լուծում կը պահանջէ:

Բ

Ի դէպ է հարցնել թէ արտասահմանի Հայերն ի՞նչ չափով մասնակից և նըպաստիչ եղած են Թրքահայոց այս փոխակերպութեան:

Անուրանալի է թէ ազատ երկիրներէ դէպի Հայաստան զգացման և խորհրդոյ հոսանք մի ընթացած է, արտասահման ապուած քաղաքական հայ թերթերու գաղտնի շրջաբերութեամբն ի Թուրքիա, և Հայրենիք վերադարձող կամ այցելող Հայերու միջոցաւ, բայց այդ հոսանքի ոյժն և կարեւորութիւնն պէտք է չափազանցել: Սխալ կը լինի կարծել թէ Հայրենիքէն դուրս, հեռաւոր երկիրներու մէջ ցրուած Հայերս առաջին, գոնէ գլխաւոր գործիչն եղած եմք Թրքահայոց հոգեկան շրջափոխութեան:

Ճնշման ենթակայ, նեղութեանց մատնուած ժողովուրդն է որ փոփոխութիւն կը կրէ, և իւր մօտ գտնուող և իւր աղէտներուն վկայ ու հաղորդ եղող առաջնորդներն են մանաւանդ որ կը ներշնչեն զիրենք: Իսկ գաղթական Հայք, ազատ երկիրներու մէջ ապահով նստած, շատք իրենց կուշտ փորն դեռ կը չփեն մասնաւոր գոհունակութեամբ, և ոմանք կարեկցելով կը խօսին, կը գրեն կամ հանգանակութիւններ կ'անեն յօգուտ հարստահարեալ եղբարց: Հայրենասիրութեան դպրոցն Հայրենիքն է ոչ թէ դաղթա-

վայրն, մանաւանդ այսպիսի ժամանակ երբ Հայրենիքն վառարան մ'է դարձած, հալոց մի, ուր կրակէ անցնելով՝ հոգիք կ'ամ կը սրբուին կ'ամ իբրեւ ազտեղութիւն դուրս կուգան:

Հայրենեաց և արտասահմանի Հայոց միջեւ զգացման տարբերութիւնն կրնայ չափուել թէ նկատմբ, օրինակի համար, թէ հոն երբ ձեռք կ'անցունեն մեր ազատ լրագիրներէն մին, անյագաբար կը կարգան, վտանգ յանձն առնելով, ձեռքէ ձեռք և նոյն իսկ քաղաքէ քաղաք կը պըտըտցունեն. իսկ հոս մեծ մասն բաժանորդագին վճարել իսկ չուցեր և ոչ ալ կարդալու մեծ փափաք ունի: Հոն խորհրդակցելու համար մեծամեծ նեղութիւն կը կրեն ու հազիւ երբէք կը յաջողին մի քանին ի մի վայր գալ. հոս ամեն դիւրութիւն կայ, բայց միաբան գործելու ջերմ փափաք մինչև վերջերս չէր տեսնուէր:

Հայրենեաց մէջ զգացման ջերմութիւն, քաջութիւն, անձնագոհութիւն հետ զհետէ աւելի կը տեսնուի, բայց ոչ հաւաքական և կազմաւորեալ ձևի տակ: Գործողութեան փլան կ'ամ ծրագիր պատրաստելու գործն արտասահմանի մէջ կրնար կատարուիլ, և շատ լաւ մշակուել ի ձեռն կեդրոնի մի որ զգօն և փորձառու առաջնորդներէ բաղկացած լինէր. սակայն ցայսօր չիրացաւ այդ առաջարկ:

«Յուսահատելու չեմք» սակայն, որպէս կ'ասէ մեր իմաստուն ՀԱՅՐԱՊԵՏՆ:

Կեդրոնացման գաղափարն սկսած է վերջերս մեր գաղթային հանրութեան տիրող գաղափարն դառնալ: Մեր մեծ գործիչներն ալ թերեւս շուտով համակրին այս շարժման, երբ տեսնեն զայն լուրջ և զօրաւոր:

Փորձառութիւնն կը ցուցնէ մեղայտմ ընդհանուր միութեան դիմելու ապահով ճանապարհն, և է սա— Այժմ գոյ եղող կամ գոյութիւն առնող առանձին ընկերութիւնք թող չսպասեն հրաշալի աւուր մի յորում յանկարծ ամենն պիտի միանան, այլ թող անմիջապէս սկսին իրարու հետ թշուառացիլ. թող մըն միանայ ուրիշի մի, և երկուքն քանակցին միանալու համար երրորդի մի, և այսպէս շարունակեն: Պէտք է կայ որ այս կամ այն ընկերակցութիւնն ընդհանուր միութեան անունն որոշելու կամ սահմանադրութիւնն ստեղծելու յոգնի

այժմ: Ընդհանուր և մեծ նպատակն ամենից սրտին մէջ է: Սահմանադրութիւնն, երբ պէտք լինի, դիւրաւ կը պատրաստուի: Սէր և միութիւն պէտք է այժմ. երբ զիրար սիրեն ու յարգեն ընկերութիւնք, կեանք կ'ունենան, և կեանքն կառնու ձև և կազմաւորութիւն:

Այս կերպով շարժելով շուտով կըրնամք ի գլուխ հանել ընդհանուր միութեան և կեդրոնացման յապաղեալ բայց ամենակարեւոր գործն:

Ն Ե Ր Կ Ա Յ

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ

Ա.

Նախորդ գրութեամբ նկատեցինք երկու պայմաններ որք էական էին յաջողութեան մեր ազգային կազմակերպման: Համառօտ քննութեամբ գոչ եղանք թէ Հայ ժողովուրդն ունի հարկաւոր մտավարժութիւն և ուշիմութիւն որ զնոսա յարմարցնէ քաղաքակիրթ կեանք և եղանակաց և թէ, ըստ երեւութին գոնէ, կան առ մեզ բաւական հայրենասէրք որք համոզուած են թէ կազմակերպութիւնն անհրաժեշտ պէտք մ'է: Սակայն դանդաղութիւնն որով գործն կը յառաջանայ զմեզ կը կասեցնէ մեր լաւատես հայեցողութեան մէջ:

Մարթ է յառաջ բերել երկու առարկութիւններ ընդդէմ առաջարկին: Նախ թէ արդի միջոցք և եղանակք բաւական են և բարւոք: Ըստ ինձ այս առարկութիւնն անհիմն է որպէս կրնամք ապացուցանել բանաւոր փաստիւք: Արդի միջոցք և եղանակք ոչ թէ միայն անբաւական են համեմատութեամբ ահագին գործոյն զսր Հայ հայրենասիրութիւն կը բաղձայ ի գլուխ հանել, այլ և գլխովին անյարմար և օտար են գործոյն բնութեան: Եթէ չհասնին բարեպատեհմունք բաղդին կամ պարագայից, նոքա զմեզ կ'առաջնորդեն յըստոյգ յուսախարութիւն:

Յուսալով ուրիշ առթիւ ցուցնել զՀայկական խնդրոյ ծանրութիւնն առ այժմ կ'ենթադրեմ թէ այդ յայտնի իրողութիւն մ'է և կ'անցնիմ քննել թէ ի՞նչ է

իսկական արժանիքն մեր արդի դրութեան: Հարեանցի ակնարկ մի մեր ներկայ բազմաթիւ ընկերութեանց, կուսակցութեանց^(*), յանձնախմբոց և խմբագրութեանց վրայ մեզ կ'ազդէ դժբաղդարար մի տխուր տպաւորութիւն, եթէ չափեմք զնոցին արժանիս զօրութեամբն տեւապէս ազդելոյ յաջողութեան գործոյն:

Այժմ կան ի հրապարակի գործիչ անհատք և ընկերակցութիւնք: Մեք վաղաքոյն յայտարարած եմք բարձր համարումքն զոր կը տածեմք առ նոսա և գոված եմք զնոցին հայրենասիրական եռանդն և անկեղծ դիտաւորութիւններն: Այլ եթէ աստ թուիմք տարբերիլ ի նոցանէ նկատմամբ խնդրոց, միջոցաց և մեթոտից, այդ չի խախտեր զմեր համարում առ նոսա և գնահատութիւն նոցա ծառայութեանց: Ծանօթ գործիչք մեր երկու շրջանակաց մէջ կ'աշխատին, արտաքին և ներքին, և իւրաքանչիւրն իւր շրջանակի կարեւորութիւնն կը չափազանցէ և կուրանայ կամ կը փոքրկացնէ զմիւսոյն: Առանց մասնաւորից դաշելոյ, նախ և առաջ նշանակենք թէ երկու կարգի գործիչք ևս սա սխալ հայեցողութեան կը յենուեն թէ արդի եղանակաւ կարող են ստիպել զԵւրոպայ գործադրել իւրեանց մասնաւոր մի ծրագիրն վերաբերմամբ ապագային Հայաստանի:

Արտաքին գործիչն գործն եղած է հրատարակել Հայաստանի թշուառ վիճակըն և յիշեցնել թէ դաշնային խոստմունք Պէտլինի 614 յօդուածոյն անգործադրուած են: Նա կը բարձրացնէ ահաբեկեալ և ամայացող «Հայաստանի աղաղակն» և գթութիւն կը հայցէ այս «Հին և արժանի» ժողովրդեան վրայ: Այսու նա կը յուսայ որ Եւրոպա ունկն դնելով այս թախանձանաց միջատիւն և Հայաստանի տայ մի ինքնօրէն վարչութիւն: Չեմ ասեր թէ այս յոյսն բոլորովին անհիմն է, սակայն մարդ աչք խփելու է որ չտեսնէ թէ որքան խախտ և հարցական է դորա Հիմն: Եթէ ապրէինք այն Ութօբիայում ուր ամեն ինչ դատուէր ըստ վերացական սկզբանց արդարութեան, կամ եթէ գոյ լիներ մի վեհապետ դատարան որոյ որոշմանց բոլոր տէրութիւնք հպատակէին անշուշտ, յայնժամ բանաւոր պատճառ կը գոյանար ակնկալելոյ թէ հրատարակել զՀայապետանի խեղճութիւն կը հետեւէր

միջամտութեամբ Եւրոպիոյ և ազատութեամբ Արմինիոյ : Յիրաւի դարուս պարծանքն է գոյութիւնն Հանրային կարծեաց որ ռամկավարական ազգաց մէջ յաճախ կը ձեւացնէ կառավարութեանց միտումն : Սակայն իրողութիւնն այս է թէ որքան և մեծ լինի ժողովրդոց համակրութիւնն առ մեզ , քաղաքականութիւնն Եւրոպեան կառավարութեանց միջոց կ'որոշուի գործնական նկատառութեամբ : Սոյն նկատմունք կրնան արգելել զնոսա ուէ գործնական միջամտութենէ , կամ կրնան տալ խնդրոյն մի լուծումն որ հայ ազգային նկատմամբ անբաղձալի լինին :

Այլ մի կէտ կայ որ աւելի ևս կը սահմանէ սոյն միջոցին օգտակարութիւնը : Արտաքին գործիչն կը յուզէ զհանրային միտքն Արեւմտեան Եւրոպիոյ միայն և կը յուսայ այնու ազդել կառավարութեանց : Սակայն նա զրկուած է յայս միջոցէն ազդելոյ ռուսական կառավարութեան : Ռուսիա ունի զիւր հաշիւն և հաւանաբար չպիտի միջամտէ զինուք մինչև որ պատասխանատու ներկայացուցիչ մի հայ Ազգին գոհացնէ զնա տալով երաշխիս նրկատմամբ ինչ ինչ խնդրոց : Գործիչ անհատն չունի զայս հեղինակութիւն դաշնադրելոյ և ուստի անգոր է ազդելոյ միակ տէրութեան որ կարող է գործնական օգնութիւն տալ մեզ : Այս նկատառութիւնք կ'ապացուցանեն թէ մեր արդի արտաքին գործունէութիւնն պակասաւոր է և չունի հանգամանքն ազդուապէս գործելոյ , իրեւ գորութիւն , և ուղղելոյ զմիտումն Եւրոպեան կառավարութեանց ի նպաստ մի հայ ծրագրի :

Սկզբնական սխալն արտաքին գործչին իւր ենթադրութիւնն է թէ Հայաստանի բարեօրոշումն ըստ Հայկական ծրագրի կրնայ գործադրուիլ ի ձեռն եւրոպացւոց , առանց հայ ժողովրդեան լինելոյ մի էական գործիչ յայնմ գործադրութեան : Այլք բազում հայրենասէրք չթերացան զիտել զանտեղութիւն սոյն սկզբանց և յայտարարեցին Հակառակ սկզբունքն թէ հայ ժողովրդեամբ է փրկութիւն Հայաստանի : Սակայն ճանաչել մի սկզբունք չի նշանակեր անպատճառ կարող լինիլ զայն ըստ պատշաճի կիրառել : Մեզ դեռ կը պակասի ճշմարիտ մարմնացումն սոյն ըսկզբանց :

Անր հայրենակիցք որք յեղափոխու-

թիւն կը քարոզեն չունին մի ծրագիր քաղաքական յեղափոխութեան , այլ ունին մի ծրագիր սարսափ ազդել ջանալոյ թուրք կառավարութեան ի մի կողմանէ և Եւրոպիոյ ի միւս կողմանէ : Յեղափոխութիւն չէ այն յոր ձեռնարկած են , այլ մի փայլուն և ուշագրաւ բողոքարկութիւն : Նոքա գործով կ'ուրանան Հայկական վարդապետութիւնն զոր լեզուաւ կը դաւանին : Նոքա յոյսն եղեալ է Եւրոպիոյ բարեհաճութեան վրայ , Սակայն եթէ մեր յեղափոխական եղբարք , զորոց հայրենասիրութիւն մեք բնաւ չեմք կասկածիր և եռանդուն կը գնահատեմք , կը խորհին թէ կրնան խաբել զԵւրոպա գորութիւն կեղծելով և ստիպել զայն միջամտել ի Հայաստան ի խաղաղեցնել զյեղափոխական ոգին , այդու կը ցուցնեն թէ որչափ քիչ կը ճանաչեն զԵւրոպա որպէս է : Եթէ լինէր իրօք մի յեղափոխական գորութիւն ի Թուրքիա որ կարէր խռովել զխաղաղութիւն ազգաց , Եւրոպա կը պարտէր հաշուել զսոյն և ըստ այնմ գործել : Եթէ արեւմտեան Եւրոպիոյ կառավարութիւնք ուշ կուտան ապստամբական խլրտմանց , պատճառն չէ թէ կը վախնան ի Հայոց այլ այն է թէ այդ պատրուակաւ կրնայ մի Եւրոպեան Տէրութիւն միջամտել և վրդովել զանդորրութիւն : Սակայն նկատելի է թէ բաց ի Ռուսիոյ , ուրիշ ոչ մի տէրութիւն որ կը շահագրգռի Հայոց վիճակաւ տրամադրութիւն ունի զինուք գործադրելոյ զիւր բանաւոր պահանջն նկատմամբ Հայաստանի : Աստի կը տեսնուի պարզապէս թէ մեր ներքին գործունէութիւնն , որ դաւանութեամբ յեղափոխական է , գործով բողոքական է :

Սոյն քննադատութիւն կը փարտտէ բոլորովին այն ցնորքն թէ մեր արդի ազգային գործունէութիւնք բաւական են և գոհացուցիչ : Աստ ապացուցինք թէ մեր արտաքին գործունէութիւնն անգոր է և անբաւական ստիպել զԵւրոպա ի նպաստ Հայոց , քանզի Եւրոպա կը շարժի գործնական նկատառութեամբք և թէ աղերսանք և անմեղ բողոքք չունին ազդեցութիւն ուր հարկաւոր են : Ապացուցինք նաև թէ մեք յեղափոխութիւն չունիմք դեռ , և թէ մեր ցոյցք և բողոքարկութիւնք անգոր են և անբաւական ազդել Եւրոպիոյ ի նպաստ մեր՝ նոյն պատճառաւ : Դիտեմք նաև թէ արմատական ախտն մեր

ներքին և արտաքին գործունէութեանց նոյն անհիմն կարծիքէն է թէ մեք կըրնամք Հին արեւելեան միջոցաւք, թախանձելով, պոռալով և զօրութիւն կեղծելով, գործել և ի գլուխ հանել մի մեծ և ծանրակշիռ գործ արդի մեքենական աշխարհի մէջ: Մեք դեռ սւսած չեմք թէ որպէս զի իրագործեմք մի նպատակ, մեք պարտիմք առնել նախաձեռնութիւն և գլխաւոր ու տիրական գործօն պատասխանատուութիւն: Մեք դեռ ի բաց թօթափած չեմք այս Արեւելեան ախտն որով կ'երեւիմք առաջի աշխարհի իրեւ մուրացկանք շնորհաց:

Եթէ կայ մի հայրենասէր որ ի տես իրացն զորս ի վերեւ համարեցինք կը պնդէ թէ արդի վիճակն լաւ է, կը խնդրեմք որ ցուցնէ թէ ինչ նկատմամբք թերի են մեր նկատառութիւնք որ զմեզ կ'առաջնորդեն եզրակացութեանս թէ մեր ազգային արդի գործունէութիւն, արտաքին և ներքին, ըստ ինքեանց անզօր են գործնականապէս յաջողցնել Հայոց փաստն, և թէ նոցին յաջողութիւնն գլխովին կախեալ է բարեպատեհ հազուագիւտ առիթէ կամ ի նպատաւոր պարագայից Եւրոպիոյ քաղաքական կացութեան, որոց վրայ նոքա չունին բնաւ շարժիչ ազդեցութիւն:

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

20Ն

ԱՌ ՊԱՏՐԻԱՐԻ ՍՐԲԱԶԱՆ

ՀԱՅՐ ՄԱՏԹԵՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Ընկալ գայս ձօն խոնարհի, ազատաշունչ ո՛վ հրեշտակ,
Որ յԱրաքէն ներշնչուած ի վեհ աթոռ բազմեցար:
Պաշտպան, անտէր որբերիս անվեհեր մեզ
կանգնեցար լեզուովդ ճարտար:

Այգիդ ես պետն քաջարի, հայր անձնուէր Իզմիրլեան
Դու միայն պիտ' կարենաս լինիլ ցաւոց մեր թարգման:
Երախտագէտ զգացմամբ ձօնեմք մեր սիրտըն քեզ միայն արտասուաց հնձան:

ԱՐԻՍ ԳՈՒՐՊԵԹԵԱՆ

1895, փետր. 21, Բուսճուք

Ս Ա Ս Ն Ո Յ Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ի Ն

ՆՈՐԱԳՈՅՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԲ

Թուրք կառավարութիւնն այլ ևս չէ կարող խուսափիլ ապացոյցներու ցանցէն որ օր քան զօր կը խտանայ ու կը պաշարէ զինքն: Եւրոպական թղթակիցներ յատմելի տեղեկագիրներ կը հեռագրեն ջարդին մանրամասնութեանց վերաբերութեամբ: Այդ թղթակիցք Հայոց բնաւորութեան մասին այնպիսի չափազանցեալ դիտողութիւններ կը խառնեն իրենց պատմութեանց հետ (իբր թէ Հայերն ստայօդ տեղեկութիւններ կարկառեալ արուեստին մէջ ճարտար լինէին քան զճարտարագոյն վիպասաններն՝) որ կարելի չէ Եւրոպացւոց ենթադրել թէ այդ թղթակիցք դիւրահաւանութեամբ կ'ընդունին ու կը հեռագրեն այդ սոսկալի գազանութեանց նկարագրութիւններն:

ԷՍՍՕՇԻԷՑԹԵՏ ՓՐԷՍԻ յատուկ թղթակիցն Կարսէն հաղորդած է հետեւեալ պատմութիւնն՝ Սասունցի փախստականէ մի առնելով: «Իմ անունս է Մարտօ (Մարտիրոս), որդի Ստեփանի, ի գիւղէն Աղբի: Մեր գիւղն կը բաղկանայր 70 տնէ, այժմ անդ ոչ մի տուն մնացած է, և ոչ մի բնակիչ: Ամենն ջարդուեցան բաց երեք ընտանիքէ: Քրդերն գայմազմին հրամանաւ յարձակեցան Սասնոյ վերայ որպէս գայլեր: Ոչ միայն մեր այր մարդիկ այլ և կիներ, նոյնիսկ պառանքներն հրաժարեցին կռուեցան Քրդաց զէմ: 21 օր տեւեց կռիւն: Երբ մենք յաջողեցանք սպաննել Քրդաց ումանքը, կանոնաւոր զօրքը եկան մեր վերայ, չգիտեմ որքան, գուցէ 20,000, զի առանց զօրքի տեղ չի մնաց: Թնդանօթ զետեղեցին և սկսան կըրակել: Երբէք թնդանօթ տեսած չունէինք, և ոչ անունն լսած մինչև այն օր: Ի լուր թնդանօթաց գոռին՝ կանայք նուաղեցան, և ռումբերն արհաւիրք, մահ և աւեր սփռեցին շուրջանակի: Մեք սկսանք փախչիլ և թաքչիլ ծակամուտ: Թնդանօթ կը շարունակէին որոտալ և աւերել, և մեք մեր հրակէզ չէներու բոցն ու ծուխըն սոսկմամբ կը հոտոտէինք:

Համիտիյէ զօրաց հրամանատարք վերաններ հաստատեցին ի բարձունս և հեռագրիտակներով սկսան գննել լեռանց կողերն: Ուր որ մեր աւերեալ չէներու մօտերն կամ քարի ետեւ նշմարեցին մար-

դու գլուխ, ձիաւոր յղեցին հոն, և սոքա ջարդ ու փշուր սպանեցին ով որ գտան՝ աննկատ սեռի և հասակի: Զոհերուն գլուխներն կը տանէին զօրապետներուն իրեն նշան յաղթանակի: Քրդերն որսացին մանուկներ և ուր որ գտան՝ քարին զարկին և քրտոյն միւսեցին ստելով «Եթէ մեծնայիք, դուք ալ պիտի կռուէիք մեզի դէմ. այժմէն զնայէք ձիւհէնէնէմ»:

Լոնտոնի ՏէՅԼԻ Թէլէգրաֆն իւր յատուկ թղթակցէն ֆամակներ կը հրատարակէ զերս, կ'երեւի թէ, Մուշէն մասնաւոր սուրհանգակով կարս կը յղէ և անտի կը հեռագրուին Լոնտոն: «Ք. Յանձնաժողովն, վրասէ այդ թղթակից, տեղեկացած է թէ Տ. Պաշտօնաւոր երէցն և նորա որդին պատուէր ստացան էին ստորագրել թուղթ մի որ ջարդն Քրդաց կը վերագրէր և Թրքերն անմեղ կը ներկայացունէր: Պաշտօնաւոր մերժեցին: Յայնժամ ոստիկանք տաքցած երկաթ դրին նոցա վզերուն: Յանձնաժողովն կ'ուզէ քննել այդ զոհերն, բայց նոքա շատ հիւանդ են: Թուրք կառավարութիւնն խոստացաւ տալ ջարդէն պրծեալներուն դրամ, սերմ, ցորեն, և անուշիկներ թողուլ: Եթէ յանձնաժողովն վերադառնալ իրենց աւերակ գիւղերն և զայնս վերաշինել: Գրեթէ բոլորն ալ մերժեցին և ենթարկուեցան դժընդակ վարմունքի: Նաև կը պատմէ թէ ի չգոյէ ուտելաց այս արկածեալք սովամահ պիտի կորնչին եթէ օգնութիւն չհասնի: Տասնեւչորս տարեկան պղկուէքն, դստերքն ջարդին զոհերուն, ողբ կ'ստամբակ վերադարձան ի Շեմայ, մեռան փոթորկի գիւղեր մի, ի չգոյէ կրակի ի սննդեան: Վեց գիւղեր կ'անուանէ՝ ուր ջարդին կացք և մնացք անուաղ են: Կառավարութիւնն իրեն ոճրագործ կը եկատէ ջարդէն խուսափածներն և Յանձնաժողովին առջեւ վկայութիւն տուողներն: Վկայք զարհուրելի բաներ կը պատմեն: Օրինակի համար, մին պատմեց թէ կաղնույ մի խոռոչին մէջ թաղնուած լինելով դիտած է թէ ինչպէս զօրքն երկու քահանայից աչքերն դուրս խճէլէ յետոյ բռնադատեցին զնոսա կաքաւել, մինչ հէք երիցունքն կ'ողաչէին որ սպաննելով վերջ տային իրենց օրհասական տագնապին: Վկայից թիւն կը շատնայր կ'ասէ, և վկայութիւնք էականապէս յոյն են: «Վկայութեանց կուտակութիւնն այնքան ահագին է որ կառավարութիւնն թերեւս ընդունի ընդ հուպ թէ ջարդն սպառնուցուած է և արձակէ Յանձնաժողովն»:

ՆԵՄՆԻ ԲԵՐԻՈՒՄ

Բարիք, 26 Փետր. 1895

Աղգային այս ահարկու տագնապին մէջ, ուսկից անշուշտ դուրս պիտի գայ ընդ հուպ կ'ամ մեր իսպառ կորուստն և կ'ամ ազատութեան սկզբնատարր մը, մեր պարտականութիւններն աւելի կը մեծանան, փոյթեաւազ աշխատութեան, ճիգերու ու ջանքի կարեւորութիւններն աւելի կը սաստկանան քան երբէք: Ոճիր մը պիտի համարուի մեզի համար անհոգ անտարբերութիւնը որոյ մէջ տակաւին տարիներէ ի վեր մեր ազգին աշխատելու կարող տարրերը կաշկանդուած կը մնան, և այս քոտմնելի եսականութիւնը որ շատերուն սովորական հանգամանքն է, ինչպէս և ոմանց անհաւատալի անկարեկցութիւնն քոտկալի դատապարտութիւն մը պիտի մնայ անոնց վրայ որոց գործակցութեանէն ազգը կարող է սպասել մի որ և է զնահատելի օգտակարութիւն: Թէ ինչ կարող են ընել մասնաւորապէս հայ գաղթականութիւններն Թուրքիայէն դուրս, ես չեմ մտադրած այս դիւրին խնդրոյն վրայ երկարաբանել. բայց միթէ պէտք չէ՞ որ խոստովանինք թէ աւելին կարելի է գործել քան ինչ որ կ'ընենք հիմա: Ահա մեծ ազգեր որոց քաղաքական արդի կացութիւնը, խնդիրները, շահերը, անհրաժեշտ կ'ընեն զբաղելու մեր վրայ գործուած բռնարարութիւններովը ու կոտորածներովը, տակաւին շատեր կը մտածեն տղայաբար որ օտար պետութիւնք լոկ մարդասիրական նկատումներով կ'ամ դաշնագրոց տրամադրութեանցը պատճառաւ պարտաւոր են դարման տանել մեր անհանդուրժելի դրութեան: Այսքան երկար տարիներու մեր անձնական փորձառութիւնը և պատմութեան դասերը բաւական չեն եղած որոշակի ցոյց տալու մեզ թէ միջազգային սովորութիւնք անգոր կը նկատեցնեն երկար ժամանակ առանց գործադրութեան, երեսի վրայ ձգուած դաշնագրութիւններն. գալով մարդասիրական զգացմանց պէտք է արդեօք կրկնել սա ճշմարտութիւնը թէ ազգերը կ'ընտրեն իրենց կառավարութիւններն գործելու ոչ թէ մարդասիրական պարտաւորութեանց համաձայն այլ մի միայն նոյն ազգաց շահերուն և օգտին համար: Եթէ դժուար է մեզի

յաւակնիլ մինչեւ մեծ գաղափարներ գործադրել օրինակի համար, միացնել ամեն գաղթականութեանց ոյժերը միևնոյն ուղղութեանը տակ, հարկաւոր ընկերութեանց, միութեանց նպատակը ջանալիփոխադարձ զիջումներով ի նոյն հանգեցնել են, գէթ կրնանք ուսումնասիրել Հայաստանին ու Հայուն քաղաքական, վարչական, տնտեսագիտական, բարոյական ևն. ճշմարիտ դիրքն ու կացութիւնը, հաւատարիմ գաղափար մ'ունենալ այս մասին և զայն տարածել մեզ չըջապատող ազգաց մէջ: Կան տակաւին այսօր պետական հանրային մարդիկ որոնք կ'անգիտեն թէ ինչ է Հայոց թիւն, կրօնքը և պատմութիւնը. աւելի կարեւոր անձնաւորութիւնք հանգիստտես հայկական խնդրոյն յառաջամանը ծանօթ չեն մեր ազգին բողձանացը և յայտնի բողոքներուն: Բայց ինչ որ կարեւորագոյնն է զարգիւ աճեն կերպով՝ քննելն է ի պէտս դիւանագիտաց թէ որ կետերու մէջ ու ինչ պատճառներով հայկական շահերն կը համաձայնին օտար տէրութիւններու շահերուն հետ, ու վիճիլ հետեաբար թէ այս մասնաւոր խնդրոյն ո՞ր կերպով լուծումն է որ կարողանայ հաշտեցնել ամեն կարգի յաւակնութիւններն ու իրաւունքները: Ցաւալի է անշուշտ որ ցարդ այս մտօք եղածը գրեթէ չնչին է. և մինչև իսկ ազգը անտեղեակ այս կարեւոր խնդրոյ մասին ի զուր կը հարցնէ պէտք եղած տեղեկութիւնները: Լրագրական ասպարէզէն դուրս ազգայինք ամենակարեւոր դեր մը կատարած կ'ըլլան ուսուցանելով նոյն իսկ զիրար այս բազմադիմի խնդիրներու վերայօք, կազմել մասնաւոր ժողովներ, լըսարաններ և մէկ խօսքով դատախօսել հանրութեան, ինչպէս կ'ըլլուի արդէն մի քանի կեդրոններու մէջ, օգտակարագոյն միջոցներէն մին է ոչ թէ միայն ներկային համար այլ մանաւանդ ապագային:

Շ.

Լոնտոնէն կը հեռագրեն Մարտ 23ին. Խորհրդարանի անդամք որք Անկլօ Արմէնիներն ընկերակցութեան մէջ չեն, միթիւնկ մի կոչած են որ տեղի պիտի ունենայ երկուշաբթի, հակաթրքական յուզումն աւելի ընդարձակօրէն կազմակերպելու համար:

ՄԱՍՆԱԽՈՍԱԿԱՆ

THE ARMENIAN
CRISIS IN TURKEY

by

FREDERIC DAVIS GREENE

Illustrated

Soy. G. P. Putnam's Sons

27 West, 23d St.,

New York

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ
Ի ԹՈՒՐԿԻԱ1894ի ԿՈՏՈՐԱԾՆ, ԱՆՈՐ ՆԱԽԸՆԹԱՑՔՆ
ԵՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ

180 էջ, 20 Պատկերով

ՅԻՇԱՍԱԿԻՆ

ՍԱՍՆՈՅ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՁՈՀԵՐՈՒՆ

Կը մուրհիմ այս կոչումմ

առ քաղաքակիրթ աշխարհ

Նշանաւոր գիրք մ'է այս, որ կոչուած է ցնցել քաղաքակիրթ աշխարհի թմրութիւնն: Հազարաւոր մարդիկ պիտի կարդան զան հառաչելով, արտասուելով, բարկանալով և սոսկմամբ:

Այս մատենիկ լուրջ և վստահ ունկնդրութիւն պահանջելու ամեն պայման ունի: Պատ. Տր. Ծօսիա Սթրօնկի—ծանօթ հեղինակի—ներածութիւնն, 20 նշանաւոր Ամերիկացի անձնաւորութեանց ստորագրութիւններն կը յանձնարարեն զայն իրեւ վստահելի և ճշմարտապատում երկասիրութիւն: Եւ յերաւի Ամերիկացի հեղինակն, որ Վանի մէջ չորս տարի բնակած լինելով, քաջ ծանօթ է Հայաստանի վիճակին և թրջաց բարբարոսութեան, հեղինակագոր և հմտալից գործ մի կը դնէ աշխարհի առջև:

Այս աշխատասիրութեան ընթացքն է հետեւեալն: Կոտորածին չըջակայ քաղաքներէն, միսիոնարաց գրչէն ելած 18 նամակներ նախ կը հաստատեն ջարդին ահաւոր իրականութիւնն: Ապա կը ցուցնէ հեղինակն թէ այս ջարդ մէկ դէպք մի

այն է սոսկալի և երկարամեայ հարստահարութեանց, և թէ վերջին յանդուգն ծայրայեղութեանց պատճառ նոյն իսկ Եւրոպեան տէրութեանց եղեռնական անփութութիւնն է: Կը նկարագրէ Սուլթանի ընթացքն և թրքաց դժգոհութիւնն: Կուտայ նախորդ կոտորածոց պատմութիւնն և ջարդուած Յունաց, Նեոսորականաց, Մարոնիներու, Պուլկարաց և Հայոց թիւն 93,000, 1822էն ի վեր: Ապա աւելի խորն մխուելով, կը նշանակէ թէ մահմետականութիւնն ինչ դեր ունի այս բոլոր չարեաց մէջ: Պատմաբան Ֆրիւմէնի վկայութիւնն ի մէջ կը բերէ Թրքաց ողբալի յետադիմութեան մասին և յետոյ խօսիլ կուտայ Մեծ Ծերունի Կլատութիւնին: Վերջապէս Հայոց համառօտ պատմութիւնն կուտայ, աւելցունելով Ամերիկացի միսիոնարաց Հայոց մէջ գործունէութեան վերայ ևս գլուխ մի:

Հեղինակն խնդրոյն լուծման գալով կը յայտարարէ թէ Եւրոպեան տէրութեանց Բ. Դրան վերայ «ճշուն մն պէտք է չլինի թեթև, ձանձրացունող տեսակէն: Այդպէս անելու տեղ, աւելի լաւ է բնաբան մի չանել: Պէտք է անմիջական, վճռական և վերջնական գործողութիւնն իրեն այնպիսի տեղ մի եկած հասած են որ այնպիսի գործողութեամբ մի միայն յուսալի է խափանել սոսկալի աղէտն, առ որով մասնոյ ջարդն թեթև բան մի պիտի համարուի: Յառաջդիմութեան անիւներն դէպ յետ չպիտի երթան բայց միայն երբ խորտակուին: Հայաստանի քրիստոնէայք կրնան ջնջուիլ, բայց չեն կրնար գերութիւն կամ իսլամութիւն ընդունիլ. ատոր ժամանակն անցած է: Կրնան ոչխարի պէս մորթուիլ, բայց ամենքն չպիտի յանձն առնուն սատկիլ իբրեւ շուն: ... Հայկական յեղափոխութեան գաղափարն նոր է այս խաղաղասէր ցեղի պատմութեան մէջ, ... բայց բնական արդիւնքն է այն ահաւոր կացութեան ուր դրուած են Հայք Պէրլինի դաշնագրէն ի վեր, և ախտն պիտի անվրէպ տարածուի և աւելի բորբոքի ու ճարակի մինչև որ Եւրոպեան տօքթիօներն արմատական դարման անեն «Հիւանդ Մարդուն» եւ դժուար է տեսնել թէ ինչ դարման կրնայ լինիլ բաց ի վիրաբուժականէն: Դանակն յաճախ գործածուած է այս անբժշկելի հիւանդին վերայ ներկայ դարուս մէջ գերագանց արդ-

եամբք:»

Հեղինակն կը յիշէ երեք հնարաւոր կերպ դանակն գործածելու. նախ ոռոսական դրաւում, երկրորդ Հայկական ինքնօրինութիւն և երրորդ, զոր ինքն իբրեւ լաւագոյն կը թելադրէ, «արմատական և կորովի վարչական վերանորոգումներ:» Միայն թէ այդ վերանորոգումներն իրագործելու նոր կերպ մի կ'առաջարկէ, որ է միակ բանաւոր կերպն. այն է որ «Եւրոպեան Տէրութիւնք նախաձեռն ինին (բարեկարգութիւններն ի գործ դնելու) և տեղեկագրեն Թուրքիոյ, ոչ թէ հակառակն սորին, որպէս կարգադրուած է 61դ յօդուածով Պէրլինի դաշնագրոյն:»

Այս գիրքն Հայ Դատին բարոյական մէկ յաղթանակն է թուրք պաշտօնական ոտութեանց և օտար շահախնդիր թերթերու դրաքանութեանց վերայ: Հայ գործաւորն իւր պօսին, Հայ ուսանողն իւր օտարազգի վարժապետին, Հայ պանդուխտն իւր օտար բարեկամաց չի կրնար աւելի ընտիր ընծայ նուիրել քան այս գրքի մէկ յիշակն, որ մաքուր տպուած ու գեղեցիկ կազմուած է Ամերիկայի պատուաւորագոյն հրատարակչաց մէկէն:

ՀԱՅԿԱՅԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ կրնայ գնուիլ թղթակազմն 60 սէնթի, լաթակազմն մէկ տոլարի, բուն հրատարակչէն, և կամ, ի մեծագոյն դիւրիւթիւն մեր Հայրենակցաց, մեր ազգային Տօքթոր Այվազեանի դիմել, սապէս.—

Dr. A. Ayvazian

424 West 57th St., New York, N. Y.

Շիքակոյէն կը գրեն մեզ.—

Տիար Մանկասար Մանկասարեան, նշանաւոր հայազգի հրապարակախօսն, մասնակցիլ սկսած է Ամերիկացւոց Հայասիրական գործունէութեան: Շիքակոյի «Եունայթէտ Ֆրէնտս օվ Արմինիա» ընկերութեան դեր ատենապետն է Տ. Մանկասարեան, և յոյս ունինք թէ իւր ծանօթ կարողութեամբն լաւ մղում պիտի տայ գործին և շատ օգտակար պիտի ըլլայ: Դժբաղդաբար մի բախդախնդիր և տիրահռչակ Հայալոյս գործումառաջնորդի դեր կատարելու սկսած է, և շատ կը վախցուի թէ մեր դատին վնաս պիտի հասցունէ եթէ Տ. Մանկասարեան և այլք չփութան հեռացունել զնա ընկերութենէն:

ՆԱԽԵՎ ԲԱՆԴՈՐՆԵՐՆԵՐ

Ֆրէզնոյ, 5 Մարտ, 1895

Տէր Խմբագիր,

Նախորդ ամսոյ 22ին Հանդէս մի
ունեցանք տեղս Վարդանանց զօրավարաց
տարեդարձին առթիւ, որնոր բաւական
մխիթարիչ երեւոյթ մ'էր տեղւոյս ազգայ-
նոց Հայրենասիրական զգացմանցն:

Նոյն Առաւօտեան Ս. Պատարագի խոր-
հուրդ կատարուեցաւ ըստ Հայաստանեայց
Ս. Եկեղեցւոյ, Գերմանացւոց եկեղեցիներէն
միոյն մէջ. ի մէջ պատարագին հոգե-
հանգստեան արարողութիւն կատարուե-
ցաւ Վարդանանց զօրավարաց և Սասնոյ
նորոգ նահատակացն: Թէև Տեղւոյս լու-
սաւորչական Հայոց թիւը խիստ քիչ է,
բայց այդ օրն տարբեր յարմուտանութեան
պատկանող բաւական Հայեր ևս ներկայ
էին: Այս կրօնական Հանդէսէն վերջ յետ
միջօրէի ժամ 1ու կէսին սկսաւ բուն Հան-
դէսն՝ «Պ. Հ. Գ. Մ.» ընկերութեան Փառա-
ւոր սրահին մէջ:

Վարդանայ մեծադիր պատկերն սեւ
շղարշներով շրջապատեալ դրուած էր բե-
մին առջեւ: Հանդէսն սկսաւ Ազգ. երգով
Հանդերձ երգեհոնի նուագածութեամբ:
Ապա վարագոյրն բացուեցաւ և բեմին վե-
րայ երևցաւ Յ. Նշիկեան Վարդանայ ըզ-
դեստովն: Իւր առաջին խօսքերն եղան
խրախոյս մի, որ զօրքերու ուղեալ կը
ձեւացունէր բայց մի և նոյն ատեն ձեւ մի
ունէր որ ներկայ Հանգամանաց կը պատ-
շաճէր և առ Հանգիսականս կ'ուղղուէր:

Երկրորդ վարագոյրը բացուելուն՝
Վարդան քնացած կը ձեւանար և երազ մի
կը տեսնար որ ապագայի գուշակութիւնն
էր և այդ ներկայ Հայոց վիճակին կ'ակ-
նարկէր: Այդ երազն բեմին խորէն կ'ար-
տասանուէր անտես անձի մի կողմանէ: Ա-
պա արհաւիրաց մէջ կ'արթննայ Վարդան
ու հարեանցի ակնարկ մ'անելով իւր սոս-
կալի երազի մասին դարձեալ կը յորդո-
րէ որ ցվերջ մարտնչին Ազատութեան սի-
րոյն համար և այդ առթիւ կը բացատրէ
«Ազատութիւն» բառին իմաստն:

Ապա դարձեալ Ազգ. երգեր երգուե-
ցան ու վայրագոյրը բացուելով բեմին վե-
րայ երևցան Տեարք Ա. Վարդանեան և Մ.
Մարգարեան, որոց առաջինը կը ներկա-
յանար քահանայի զգեստով իբր Սասուն-

ցի Տէր Գարրիէլ և միւսն Սարգիս Ռէս-
Գրգո: Քահանայն խիստ սրտաշարժ կեր-
պով կը պատմէր Սասնոյ ժողովրդեան
տառապանքն, և հարստահարութիւնքն,
թուրք կառավարութեան տրոց սոսկալի
ծանրութիւնն՝ կը պատմէր իւրեանց բա-
նակցութիւնն կառավարութեան պաշտո-
նէից հետ, տուրքերն վճարելու պատրաս-
տականութիւնն եթէ կառավարութիւնն
յօժարէր պաշտպանել, ի վերջոյ կը յոր-
դորէր զՌէս Գրգոն որ միանայ իւրեանց
հետ և իւր ազգեցութեամբն և օրինակո-
վն իւր և շրջաբնակ գիւղացիներն որք
հանէ պաշտպանելու իւրեանց իրաւունքն,
պատիւն, հաւատքն ու ազատութիւնն,
(ինչք պահպանելու պէտք չկար որովհե-
տեւ չունէին արդէն:) Ռէս Գրգոն գովեց
քահանային քաջասիրտութիւնն և անձնու-
իրութիւնն և միտնգամայն յիշեցոյց թէ
որպիսի պարագայից մէջ պէտք է քահա-
նայք մէկ ձեռքով Աւետարան և միւսովն
զէնք բռնեն և այդ աւելի մեծ ազդեցու-
թիւն կ'ընէ ժողովրդեան վրայ քան թէ
Ռէս Գրգոի մի խօսքերն: Եւ վերջապէս
քահանայ ու Ռէս ուխտեցին որ մինչեւ
վերջը մաքառին և կամ ազատութիւն
ձեռք բերեն և կամ մեռնին պատուով, ան-
սասան մնալով իւրեանց հաւատքին մէջ,
այս ուխտով կը հեռանան բեմէն ու վա-
րագոյրն կ'իջնէ:

Ազգ. երգերէ ետք վարագոյրը կը բա-
ցուի և բեմին վրայ կ'երևի Տիկին Մ. Մար-
գարեան Սասունցի կնոջ տարագով և կը-
ներկայանայ իբրեւ «ՇԱՔԷՆ»: Գիտեն ար-
դէն թէ Շաքէն այն դիւցազնուհին է որ
ինքզինք վար ձգեց բարձրաբերձ ժայռե-
րէն խոր անդունդի մէջ, որպէս զի վա-
ռաշոտ թուրք զօրաց ձեռք չիյնայ ու իր
պատիւն անաղարտ մնայ:

Շաքէն խօսքը կ'ուղղէր իւր ընկերու-
հիներուն և կ'ըսէր թէ իւրեանց քաջերն՝
այր, եղբայր, հայր ու սրգի ամենքն ալ
ջարդուեցան վայրագ զօրքերէն, իրենց ո՛ր
և է տեղէ մի յոյս ու ապաւէն չմնաց բայց
միայն յանձնել ինքզինքնին Աստուծոյ ի-
րենց կեանքին վերջ տալով, քան թէ մե-
նալ կենդանի և կատաղութեամբ մոլեղ-
նեալ զօրաց զրկին մէջ արատաւորել իւր-
եանց պատիւն: Շաքէն օրինակ կ'ըլլար
իւր ընկերուհեաց և ցոյց տալով զօրաց
կատարած ահռելի գործերն, կը վազէր
երթալ ժայռն ի վեր ու ինքզինքն վար

գահավիժել :

Վարազդայրը գոցուեցաւ խիստ տխուր տպաւորութեան մէջ թողլով բոլոր հանգիսականներն, շատեր կ'արտառուէին :

Սոյն հանգիսին ներկայ էին բոլոր Հայերն՝ ի բաց քառեալ մի քանի յայտնի անձեր որք մատի վրայ կը համարուին, և մեք այդ անձանց յիշատակութիւնն չափաւ ընէինք եթէ քաղաքիս առաջնակարգ կամ հարուստ համարուող դասին չվերաբերէին, որք անկախ և անկարօտ գիրքի մէջ գտնուելով միշտ դիւրութիւն ունին քանի մը ժամ զոհեցու և նոյն իսկ առաջնորդ հանգիսանալու այսպիսի պարագայից մէջ : Յաւալին այն է որ ոչ միայն բարոյապէս այլ նիւթապէս ալ այդ տնայինք օգնելու տրամադիր եղած չեն հայրենասիրական ո՛րեք ձեռնարկի. և արդէն հասկցուած է թէ քանի մի սէնթ կամ քանի մի տոլար չվճարելու համար է միայն որ խոյս կուտան հանրային հանդէսներէ, ժողովներէ և բարենպատակ ընկերակցութեանց մասնակցելէ : Ապրի ու միշտ ապրի գործաւոր ու աղքատ համարուող դասը որ թէ զգացմամբ և թէ հոգիով բարձր ու հարուստ եղած է մեր ընչեղ Արմենիէն :

Ձերդ

Յ. Մ. ՆՇԻԿԵԱՆ

Յ. Գ. կը խնդրեմ որ անունս հրատարակէք յօդուածոյս ներքեւ, որովհետեւ մեր մէջ ընդհանրապէս սովորութիւն դարձած է յօդուածագիրն փնտռել ու հասկնալ քան թէ յօդուածին մէջ եղած ճշմարտութիւնն ըմբռնել, կամ եթէ սխալ ու զրպարտութիւն կայ զայն ուղղել ու հերքել : Կ'ուզեմ ազատիլ այդպիսի խուզարկութենէ :

ՆՈՅՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

Գահիրէ, Մարտ 3, 1895

Բարակ, աղւորիկ թղթի վրայ տպագրուած այդ երկլեզուեայ ազդարարութենէն որուն վերի մէկ անկիւնն ալ «ըստիպողական» բառը ամէնէն առաջ թշնամի կը զարնէր, որն Լոնտոնի «Անկլո-Արմէնիքն Ընկերակցութիւնն» անցեալներս հարկ սեպած էր ցրուել «Աշխարհիս բոլոր Հայերուն», խաչորկեկ ծրար մ'ալ Գահիրէի բարեգործական ընկերութեան սրճարանը զրկուած էր : Աշխարհիս հայերուն պէս Գահիրէի հայ հասարակութիւնն ալ տեղե-

կացաւ որ այդ ազդարարական խնդրագրով Լոնտոնի ծանօթ ընկերակցութիւնը նիւթական անմիջական օգնութիւն կը պահանջէ ամեն Հայէ որով կարենայ Լոնտոնի մէջ թէ ընդհանրական միթիւններ դումարել, թէ այլ և այլ նպաստւոր միջոցներ ի գործ դնելով պաշտպանել հայկական սուրբ դասը :

Սրճարանին մէջ խումբ խումբ հայերուն, որոնք ձեռքերնին ունէին ազդարարագրէն մէկ մէկ օրինակ, շուրջանակի փոքրիկ այցելութիւններ կուտամ, կարճ խելքովս, իբր թէ, կը փափաքեմ ընդհանրութեան գաղափարը առնելու պէս բան մ'ընել ասանկով, և շատ ալ հաճելի բան է, տեսակետով մը, խումբէ ի խումբ, մարդէ ի մարդ այսպէս անցնելով, լսել, գուշուկեցած, այն իրարու նման ու ներհակ կարծիքները. սրոց մէջ, չմոռնամ ըսել, արտառոցներ ալ պակաս չեն, որոնք կ'արտայայտուին հայկական դատին նկատմամբ ընդհանրապէս, ու այս զըրկուած ազդարարութեան նկատմամբ մասնաւորապէս :

«Պըրէ աղբար, աւանկ չըլլար, Ավրոփային մէջ գործող հայերը պէտք է միանան ու ամբողջ ազգին վստահութիւնը շահող քոմիթէ մը կ'ըսէք, ի՞նչ կ'ըսէք կազմեն, անանկ որ ամեն մարդ սկսի իր փարան թէմիզ սրտով զրկէ ու ո՛ր և ո՛րու զրկելն ալ պէլլի ըլլայ» կըսէ մէկը :

— «Ճանճմ, վաղը քանի մը ոսկի հաւաքելու զրկելու է այս ընկերակցութեան, ամօթ է, ի՞նչ պիտի ըսեն ինկիլիզները երբ տեսնան որ իրենք օտար ըլլալով կը աշխատին մարդիկը մեր ազատութեան համար, մինչդեռ մենք իրենց պահանջած նպաստը չենք զրկեր մեր Ս. գործին ծախսելու նպատակաւ», կ'ըսէ միջերնուն այն որ աւելի պահպանողական գաղափարներու արտայայտողն ըլլալու է :

— «Հա աղբար, հա, վաղը հաւաքենք :

Եւ այդ վաղն է որ մէկ երկու երիտասարդներ իրենց աշխատած գործատուներու մէջ կը ձեռնարկեն հանգանակութեան մը, որուն գումարը մինչեւ այսօր 3—400 զըշ. ը չէ անցած, և անանկ ալ լուրեր կը շրջին որ ամօթ ըլլալու չափ անբաւական գումար մը ըլլալով այս եգիպտոսէն զրկուելու, կը մտադրուի ամեն աշխատաւորի ետ տալ իր փոքրիկ նպաստը, քանի որ անգին շատ և քիչ բարեկե-

ցիկ դադարադադրեալ ալ չէ բացած Հանգա-
ն կութիւն մը:

Մարդ կրնայ ամբողջ եզրկատոսի Հա-
յերուն գաղափարը գլխաւորաբար երեքի
բաժնել. — Անոնք որք կը փափաքին Աւ-
րոփային մէջ զօրաւոր գոմիթէ մը տես-
նել որուն ետեւէն կըսեն, պիտի փութա-
ցնեն իրենց օգնութիւնները. — Անոնք որք
յարած են այս կամ այն թերթին ու կու-
սակցութեան. իրա՛ւ, ամենէն մեծ դա-
սակցութեան մոռցայ, այսինքն ան որ երբէք
ո՛չ գաղափար ունի և ոչ յարում բացի,
անտարակոյս, պախարակելի անտարբե-
րութենէ մը դէպի ներկայ ընդհանուր
ճգնաժամին մէջ յուզուող խնդիրները:

Գահիրէի մէջ Հայ երիտասարդներու
ուրիշ խումբ մ'ալ կ'այ որ կարծես երբէք
բան մը չընենէն աւելի լաւ սեպած է, և
բաւական ալ գովելի է, ազգային թա-
տերական ներկայացումներ տալ, երկրորդ
անգամ ըլլալով ազգային ընտիր ներկա-
յացում մը, այս անգամ «Գայլ Վահանը»
ներկայացուց քաղաքիս Էօզպէթիէ պար-
տէզի չքեղ թատրոնին մէջ: Եւ թերեւս
մօտերս Ալէքսանդրիոսի մէջն ալ մէկ եր-
կու ներկայացումներ տայ. յաջողութիւն-
ներ:

ԱՐԱՄ

ՆԱՄԱԿ ՆԻՈՒ ՊՐԻԹԷՆԷՆ

Տէր Խմբագիր,

Տեղւոյս Հայերը Սասնոյ կոտորածէն
անմիջապէս վերջը կազմեցին մի փոքր մի-
ութիւն: Նպատակն է օգնել Հայաստանի
սոսաւաբեց, և աշխատիլ օտարականնե-
րուն գութը դարձունել Հայ Ազգին վը-
րայ: Միութիւնը պէտք է ըլլայ մի ճիշդ
Ամերիկայի ընդհանուր միութեան երբ գո-
յանայ ասանկ միութիւն մը, և այս նպա-
տակաւ վերջին ժողովին մէջ որոշեց գրել
ի Շիքակոյ:

Տեսնելով որ Ամերիկայի ընդհանուր
միութեան գոյացումը կ'ուշանայ, մաս-
նաճիւղս գործի սկսեց, և երկու տեղ մէս-
միթինկ ըրաւ, մէկը Մէրիտին և միւսն
ալ Թրանթօ, Բանաստ: Երկու շարաթ ա-
ռաջ ալ շատուարի գումար մի իրկեց Հա-
յաստանի թշուառներուն կամ սովեց
Մշակի խմբագրատան միջոցաւ. և Մարտ
10 նիստին մէջն ալ 20 տուար Հանգանա-
կեց խրկելու Լօնտոն Անկլօ-Արմինիըն Մի-
ութեան: Այս Հանգանակութեանց մաս-
նակցած են Մերիտին քաղաքը գտնուող
Հայերն ալ:

Քարտուղար
Յ. Գ.

Նախագահ
Պ. Պ.

ՇԱՏ ՈՒՐԱԽԱԼԻ Է

Սրանից քսան քսանհինգ տարի առաջ
նոյն ազգութեան պատկանող, բայց կրօ-
նով միմիանցից տարբեր Հայերի մէջ ոչ թէ
միայն խաւար թիւրքաց Հայաստանում,
այլ նոյն իսկ Կովկասում և Եւրոպայում,
ներքին ատելութիւնը և փոխադարձ թշ-
նամութիւնը այնքան բուռն, կատաղի և
սաստիկ էր, որ ոչ մի Հասարակական
Հարց, ոչ մի խնդիր, ոչ մի գործ չէր կա-
րողանում մոռացնել տալ այդ թշնամու-
թիւնը և այդ խորին ատելութիւնը: Կա-
թօլիկ Հայը լուսաւորչական Հային աւելի
էր ատում, քան թուրքին և պարսկին. իսկ
լուսաւորչական եկեղեցուն պատկանող Հա-
յերը պատրաստ էին ձեռք մեկնել մահմե-
տականին, քան թէ ազգակից կաթօլիկ
կամ բողոքական Հային:

Սակայն գաղափարը յաղթեց. — տա-
րիներ ընթացքում, մեծ դժուարութեամբ
և աննկարագրելի խոչընդոտներով քարո-
զած միտքը տարաւ իր յաղթանակը, և
մենք այժմ ականատես ենք, թէ ինչպէս
լուսաւորչական, կաթօլիկ, բողոքական
Հայերը, ներշնչուած աւելի բարձր զգաց-
մունքներով և աւելի լայն Հայեացքներով,
քան թէ կրօններ ի նեղ Հայեացքն է,
սկսեւ են վերաբերվել միմեանց Համե-
րաշխութեամբ, սիրով, մոռացութեան
տալով կրօնական խտրութիւնը:

Դրա ամենափայլուն ապացոյցներից
մէկը այն որոշ դիրքն է, որ բռնել է Թուր-
քիայում Հայ-կաթօլիկ Համայնքը դէպի
տխրահռչակ Ազարեան պատրիարքը, և
դէպի նրա Հակակրէլի դիրքը:

... Կաթօլիկ Հայերը աւելի առաջ են
գնացել, աւելի լաւ են ըմբռնել ժամա-
նակի ոգին, քան թէ ժողովրդից և կեան-
քից կտրված պատրիարքը, և այդ պատ-
ճառով Ազարեանի բռնած դիրքը, նրա
գրած թագրիրները, նրա ցոյց տուած
թշնամութիւնը դէպի Հայոց Հարցը, — մի-
անգամից առաջ բերեց բողոք, թշնամու-
թիւն, ատելութիւն, նոյն իսկ յուզմունք
կաթօլիկ Հայերի մէջ...

Ազարեան Պատրիարքը միայն այժմ է
Հասկացել իր սխալը. նա փորձում է Հեր-
քել, փորձում է յետ վերցնել իր ասած-
ները, փորձում է ջնջել իր ասածների
սոսկալի տպաւորութիւնը. — բայց ոչ ինչ
չէ աջողվում: Արդէն ուշ է: (ՄՇԱԿ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Բարիքի նման ՏՕՌԻԱՆՆ կը տեղեկանայ թէ թուրք մի զՍ. Պատրիարքն տեսնել ուզեր է, և սակայն կասկածելի երեւնալով բարապանաց խուզարխութեան ենթարկուած է, և ապաքէն դանակ մի, երկու դաշոյն և երկու բիւլովքը գտած են վրան: Զարմանք չէ եթէ թուրք մուսուլման դաւաճանել փորձեն կենացն այս նորօրինակ Պատրիարքին որ ինքն վախճալու փոխանակ՝ վախ կ'ազդէ Փառիշահին:

Հոնտոն, Մարտ 22. — Խորհրդարանին մէջ այսօր Սըր Է. Կրէյ, Արտաքին Գործոց ենթաքարտուղար, ծանոյց թէ կառավարութիւնն պաշտօնապէս տեղեկացած է թէ այժմ բանտի մէջ գտնուող բոլոր հայ եկեղեցականներն պիտի բերուին ի Կ. Պոլիս և ամենքն պիտի արձակուին՝ այսուհետեւ լաւ վարուելու ուխտ անելով:

Հեռագիր մի կը ծանուցանէ թէ Շապին Գարահիսարի մէջ կրիւ պատահած է Վերջերս և Հայեր սպաննուած են բաւական թուով:

Մարտ 24ին Վիեննայէն կը հեռագրեն թէ նոր ընդհարում մ'է տեղի ունեցեր Թրքաց և Հայոց միջեւ ի Թոգաթ, Մարտ 20ին: Պաշտօնական տեղեկութիւնն կ'ասէ թէ մէկ անձ միայն սպաննուած է: Աւելի նոր լուրն է թէ 40 սպաննուած կայ և աւելի բազում վիրաւորուած:

Ռիվիու Տէ Տէօ Մօնտի Մարտ 1ի թուոյն մէջ հետաքրքրական ուսումնասիրութիւն մի կայ ի գրչէն Կոմս Պէնէտէթ-Թիի, «Անգլիացի դեսպան մի յԱրեւել» խորագրով, այն է Լորտ Սթրաթֆորտ տը Բէտքլիֆ: Որ բազում տարիներ Պալատին ու Բ. Դրան վերայ գերակշիռ ազդեցութիւն վայելեց և Թուրքիոյ քաղաքական ու վարչական դեկն ի ձեռին ունեցաւ: Այս մարդ, Անգլիական Հպարտութեամբ լի, երբ արձակուելով կը մեկնէր Կ. Պոլիս 1852ին, իւր ազգայնոց մէկ ճաշկերոյթին մէջ խօսելով սապէս վերջացոյց իւր ճառ.

«Իմ պաշտօնի» բոլոր տեսողութեան մէջ ի Կ. Պոլիս, միշտ նպատակ ունեցած եմ անգլիական վաճառականութիւնն ազդեալ պէտքէն պաշտպանել, և միանգամայն առաջնորդ և զօրավոր լինիլ թուրք կառավարութեան ի կատարել այն չեփոք-

րին գործն յոր ձեռնարկած է երկար տարիներէ հետէ: Ուրիշ ժամանակ, պահ մի յուսացած եմ յաջողիլ. այսօր կարող եմ յայտարարել թէ, հաջառակ բարի դիտաւորութեանց վեհապետին, հակառակ հայրենանուէր մի քանի մարդոց տաղանդին, յաջողութիւնն անհնար է: ազգին զանգուածն ապականած է, յափշտակութիւնն, գողութիւնն և զօջաքաղութիւնն ամեն ուրեք են, ընկճումն ամենուստ կը տեսնուի, և յաջա իմ հարիքն այսուհետեւ անդարմանելի է:»

Ռուսչաքէն (Պուլկարիա) կը գրէ մեզ հայ խանութպան մի. —

Անցեալ տարուան Դեկտ. 25ին քաղաքս կատարուած Հայ և Մակեդոնական միթիինկէն ի վեր քաղաքիս Տաճիկներն ալ միթիինկ մը կազմեցին և որոշեցին Հայոցս հետ բնաւ առևտուր չընել: Եւ արդարեւ այն օրէն ի վեր պնդութեամբ կը պահեն այս որոշումին, զոր հաղորդած են նաև մերձակայ տաճկաբնակ քաղաքներու, և այն տեղերն ալ, հեաեապէս, Թրքերն սկսած են ցրտանալ հայ խանութպաններէն: Տաճկաց այս որոշումը զգալապէս վնասեց պուլկարաբնակ հայ խանութպաններուն: Երանի՜ թէ մենք Հայերս ալ մեր բարի որոշումներուն վրայ դիտնայինք այնքան հաստատ մնալ որքան Տաճիկք իրենց ատելութեան վրայ:

Հեաեաեալն Խարբերդէն նոր հասած է նիւթըն բնակող հայրենակցի մի:

Գաւառիս մահմետականք կը պատրաստուին քրիստոնեաներն կոտորելու: Կըրօնական մոլեռանդութեան ներշնչոյն է Մէզրէցի ծանօթ Հաճի Խօճան: Յիշեալն ամեն ուրբաթ օր մզկիթին մէջ կը քարօզէ դրօշակրութիւն ընդդէմ քրիստոնէից: Ոստիկանաց հազարապետ Պարի Մուհամմէտը յիսնապետ Աքիֆի հետ գիւղերը կ'աւերեն զինուորական տուրք հաւաքելու պատրուակաւ, և անկարենիուն կարասիքը ուէ չնչին գնով վաճառելով տուրքերն կը գանձեն: Ուր որ այդ աղբիւրն ալ չորցած գտնեն, չքուորն բանա կը տանին: Այդ կերպով բանտարկուածներու թիւն այժմ հարիւրը կ'անցնի: Ոմանք մեռան ի բանտի, չէրմանալով ծեծին: Գիշեր ժամանակ լապտերով կամ առանց լապտերի ոչ մի հայ պաշտիլ կը համարձակի, մինչև Թրքերը գիշերած քուրդ

գիշեր կը շրջին և գողութեամբ կը գրաւին :

Ասկէ չորս տարի առաջ Եղէգի գիւղին մէջ ժողով մ'ըրին Թրքերն և զՀայերն ջարդելու ծրագիր պատրաստեցին . այն ատեն միայն Պէկզատէն չստորագրեց , և նոյնն հիմակ ալ դէմ կը կենայ Թրքաց խորհուրդին :

Ուստըրէն կը գրեն մեզ — «Մարտ 24 կիրակին Ս. Փրկիչ եկեղեցւոյ ներքեւի սրահին մէջ եռանդուն ատենախօսութիւններ եղան ընդ նախագահութեամբ Արժ. Հայր Տէր Ռէնէնի , և իբր 400 տղարի Հանգանակութիւն մ'եղաւ յօգուտ Սասնոյ թշուառացւոց : Ներկայ էին աւելի քան 350 ազգայինք :

Ուստըրի «Թեւեկրամ» թերթին մէջ կը կարգամք թէ քաղաքին բողոքական Հայերն ժողով մուկեցեր են Մարտ 24ին , ուր Պատ. ՔէՄՍԼԵԱՆ, քարոզիչն , և Տիար Ծերունեան , և Տիար Չթճեան խօսեր են , և ներկայ ազգայինք թուով իբր 150 , իսկոյն Հանգանակեր են 250 տղար , յօգուտ Սասնոյ տառապեալ Հայրենակցաց : Այս Հանգանակութեան հոգն տանելու համար մասնախումբ մի ընտրուած է զոր կը կազմեն Տ. Տ. Պատ. ՔէՄՍԼԵԱՆ , Տ. Ծերունեան , Մ. Ս. Թ. Նահիկեան , Տ. Ռատիկեան , Վ. Տօնիկեան և Կ. Մարգարեան :

Յրէջնոյէն կը գրեն մեզ թէ մերայինք 75 տղար Հանգանակած և յղած են Անկլօ Արմէնեան ընկերակցութեան :

Փրովիտէնսէն կը գրեն մեզ Հետեւեալ ուրախալի տողերն . — Տեոնելով ներկայի նիւթական օգնութեան անմիջական պէտքըն՝ Սասնոյ կոտորածէն պրծած մեր խեղճ եղբարց համար , բողոքական երիտասարդք իրենց կիրակնօրեայ դպրոցի Հանգանակութենէն գոյացած փողերն , և մեր վերատեսչի ջանքով պատրաստուածը , ընդամենը յիսուն տղարի գումար մը , ուղարկեցինք Պօրտի Քարտուղար Տր. Պարթևի , որ խոստացած է ապահով միջոցով փոխանձել Մուշ , որ մեր հէք Հայրենակցաց բաշխուի : Տիար Սարկաւագեան մեր դասի ատեն անգլիերէն լեզուաւ խօսեցաւ և պատմեց թէ որ աստիճանի հասած է չքաւորութիւնը Հայաստանի մէջ . ասոր վրայ վերատեսուչն ու վարժուհիք անմիջական օգնութիւն մ'անելու փափաք յայտ-

նեցին և ուզեցին որ յիշեալ գումարն իսկոյն յղուի : Այս ազնիւ Ամերիկացւոյմէ յատ շնորհակալ ենք իրենց համակրական օգնութեան համար :

Ի դիմաց կիր. դպրոցի աշակերտաց
ԱՐՄԵՆԱԿ ՏԵՓՈՅԵԱՆ

Շիքակոյէն կը գրեն մեզ թէ քաղաքին Հնչակեան մասնաճիւղն «Հնչակեան» կոչուելէ դադարած է պաշտօնապէս :

Նիւ Եօրքի Հնչակեանց Մարտ 2ի ժողովին ներկայ գտնուած ազգային մի կը գրէ մեզ թէ նոցա ատենապետն յայտարարած է ի ժողովի թէ իրենց հրաժարականն յղած են կեդրոնին (Հնչակի խմբագրութեան) կնքոյն հետ ի միասին , և թէ այսուհետեւ իրենք զիրենք այլ ևս Հնչակեան չեն նկատեր , այլ ուրիշ յեղափոխականաց կարգէն են :

Նիւ Եօրքի Հայրենակից մի որ խաչակիր կոչուած ընկերութեան Մարտ 23ի ժողովին ներկայ գտնուած է , մեզ յղած է «տեղեկութիւն» բաւական երկար , զոր հրատարակել ի դէպ չեմք համարիր . մենք որքան որ կարելի է կը հրաժարիմք անկանոնութեանց և անհեթեթ անցից նկարագրութիւններն սալէ այս թերթի մէջ , համոզուած լինելով թէ հրատարակութիւնն դարման չի բերեր միշտ , այլ պէտք է սիրով խրատել առանձին :

Ուստըրէն կը գրեն մեզ . —

Հոս Մարտ 10ի կիրակի օրն Արժ. Հ. Մաղաքիա Վ. Տէրունեան կարգաց Ամն. Տ. Մատթէոս Պատրիարքի կոնդակն : Նոյնպէս և բողոքականաց քարոզիչ Պատ. ՔէՄՍԼԵԱՆ նոյն կոնդակի կարեւորութիւնն բացատրեց բողոքականաց : Ասոր վրայ լուսաւորչականներէ ոմանք դանգատեցան թէ Ի՞նչ իրաւամբ բողոքական Հայերը մեր Պատրիարքին ու կաթողիկոսին վրայ գովեստ կը խօսին և մաղթանքներ կընեն ժողովարանին մէջ :

(Արժ. Հ. Տէրունեանի ուշադրութիւնն կը հրաւիրեմք այս անցքերու վերայ , և կը յուսամք թէ Ս. Հայրն կը փութայ խրատել մեր մէջ գտնուող այն տղայամիտներն , որք զրախօսութեամբ բողոքականաց ազգային զգացումներն կը վերադարձնեն , և աւելորդ արգելքներ կը Հանեն անոնց վերադարձ ուղղութեան դէմ : ԽՄԲ.)

Ուստըրէն կը գրեն մեզ .—

Մարտ 18ին Ամերիկացիք մեծ մի-
թինկ մի կազմեցին Հայկական Խնդիրն
նկատելու համար: Դատաւոր Ֆոպէս,
Պէրթէն Փօթթէր և Ֆիլիփ Մօէն սոսկա-
լի հարուածներ տուին թուրք կառավա-
րութեան և ցոյց տուին թէ Գրիստոնեայ
Տէրութիւնը պարտէին այլ ևս չհանդուր-
ժել որ մարդկութեան այդ անէծքն ու
նախատինքն մնայ քրիստոնեայ հասարա-
կութեան վերայ ի Հայաստան:

Կէյ Օղլի Սարգիս և Փառլախեան Գրի-
գոր, երկուքն ալ Մարաշցի, գրեթէ մէկ
ու կէս տարի առաջ աներեւոյթ եղած են,
և կը կարծուի թէ Ամերիկայ եկած են:
Արդ, կը խնդրուի մեր ազգայիններէն որ
եթէ լսւր ունին անոնց ուր տեղ լինին
հաճին մեզ գրիւլ:

H. Kurkjian,

Bergenline Ave., Cor. Humboldt St.,
Union Hill, N. J.

ՀԱՅՆՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգիրն է 5 տւլար
հասցէն է "խմբագրութիւն Մշակի"(MSCHAK)
Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա, ԱՐՁԱԳԱՆՔԻ ևս
պայմանն ու հասցէն նոյն է:

Մեր ընթացողը ուսումնական թերթերն
են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵՆԱՅ և ԲԱԶՄԱՎԷՊ: Տարե-
կան բաժնեգիրն իւրաքանչիւրին է 2 տուլար:

ԲԱԶՄԱՎԷՊԻ հասցէն է,

Redaction du BASMAVEP

St. Lazare, Venis, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵՆԱՅի հասցէն է,

Redaction du HANTES,

Convent Mechharist.

VIENNE, AUTRICHE

ԼՍՈՄԲԵՆԻ-ԱՐՄԵՆԻՈՅ բաժնեգիրն է 3 տու-
լար 75 սէնթ. հասցէն է—

33 De vere Gardens W, LONDON, ENG.

«ԱՐԱ»ի Տարեկան բաժնեգիրն է եր-
կու տուլար:

Հասցէն է.

Editor of ARA,

Chogda, Bengal, INDIA.

«Հայքի» նախորդ տարիներն կը վա-
ճառուին հետեւեալ գներով.

Ա. տարի, 1 տուլար 50 սէնթ կամ 7.5 ֆր.
Բ. " 2 " " կամ 10 ֆրանք:

Գ. " 2 " " " " "

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու

Նիւ Լորք

26դ. և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով



CAN I OBTAIN A PATENT? For a
prompt answer and an honest opinion, write to
MUNN & CO., who have had nearly fifty years'
experience in the patent business. Communica-
tions strictly confidential. A Handbook of In-
formation concerning Patents and how to ob-
tain them sent free. Also a catalogue of mechan-
ical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive
special notice in the Scientific American, and
thus are brought widely before the public with-
out cost to the inventor. This splendid paper,
issued weekly, elegantly illustrated, has by far the
largest circulation of any scientific work in the
world. \$3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, \$2.50 a year. Single
copies, 25 cents. Every number contains beau-
tiful plates, in colors, and photographs of new
houses, with plans, enabling builders to show the
latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

5 և 7 E. 10դ. Փողոց

5դ. Էվինիուի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տու-
լարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր:

CHEVOLA & BARALDI,

successor to

LANTELME'S RESTAURANT

40 Union Square

(East side)

Bet. 16th and 17th Sts., - NEW YORK.

ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՈՒՆԴԱԿԱՆ
ՃԱՇԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

Բաւական թուով Պոլսոյ չէնքերու
Փօթոկրաֆներ ունիմ, իւրաքանչիւրն 30
սէնթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ
գնով գրել հետեւեալ հասցէին.

H. K. Samuelian

8 Grant AVE.

AUBURN N. Y.



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի
Թուրքիոյ կամ Եւրոպիոյ սեւէ կողմ եր-
թալ ուղղներուն: Մասնաւոր գծեր ու-
նիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա
տանելու: Մեծ դիւրութիւն մը կը լինի
ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ
գծով պիտի ուղեւորին, և տոմսակին կը
գնեն մէկէն, որով թէ՛ ածան գնով պի-
տի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ
տոմսակ գնելու համար միջնորդներու
պէտք չունենան և չխաբուին: Նոյնպէս
Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ
դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խը-
կել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչ-
պէս շատերուն եղած է: Ամենէն լաւ գի-
ծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆՐ որուն վրայ
բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն
լած ենք: Նաւերը մեծ և գեղեցիկ են և
արագ կ'երթան: Լաւ կերակուր և գինի
կուտան, և ածան գնով:

Նաև մեր տանց ստակի փոխադրու-
թիւնը տարիներէ հետէ գոհացուցած է
բոլոր յաճախորդներն: Փորձառուներէն
հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ
որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշ
ներէն ածան կուտանք: Ապահովութիւնը
բոլոր շահերուն մեծագոյնն է և չառ տարի-
ներու փորձառութիւնը մեծ ապահովու-
թիւն մ'է: Աստի ստակ և տոմսակ Թուր-
քիոյ կամ Եւրոպիոյ սեւէ կողմ խրկել ու-
ղղներ կամ տեղեկութիւն ուղղներ
կրնան դիմել հետեւեալ հասցէին:

Նամակներու պատասխանները չուտով
կը գրուին:

D. M. SHOOSHAN
41 Exchange St. Worcester, Mass.

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասաւորը զինուորա-
կան կրթութեան, բազում ձեւերով բացա-
տրեալ: աշխատանքի բաց Գրիգոր Գոս-
պարեան: Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի
գին 50 սէնթ կմ 2 ու կէս ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ
ՈՒ ԱՊՍԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք»ի
մէջ հրատարակուած: գրեաց Մ. Ս. Գաբ-
րիէլեան: Գին 20 սէնթ կմ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Բաղաքականութեան վերայ
հանրային ուշադրութիւնն աւելի զբաղե-
ցունելու և կարող գրիչներն նոյն կենսա-
կան խնդրոյ վերայ շարժել տալու նպա-
տակաւ ի լոյս ընծայուած է այս ուսում-
նասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ
10 սէնթ:

ԱՏԵՆԱԽՍՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հա-
ւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն
հարստահարութեանց և Դրան հակառակ
քաղաքականութեան ահաւոր նկարագիրն
և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգա-
յին շարժմանց առաջնորդի մի փորձա-
ռութեան և ձգտմանց շրջափոխութիւնն:
Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՍՍՈՒԹԵԱՆ, 21

դաս 16 պատկերօք և յաւելուածով ազ-
գային ու օտար հատրնտիւր ընթերց-
ուածոց, Երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէ-
լեանի, 1891, գին 1 թալէն կամ 5 ֆրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական
տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հա-
ղերձ պատուական և լաւ յաջողալ
պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ
կամ 50 սանթիմ:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ